ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՑՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին իշխան Սիմէօն Ս. Աբամելիք Լազարեանի գաղթականների օգտին փոխադրած Երևանի Վ.օլժսկո-կամնկի բանկում ընթացիկ հաշուով քսան և հինգ հազար (25,000) ռուբլու թ. 159 գրքոյկը և առաջադրուեց ստացման առթիւ անդորրագիր ուղարկել նուիրատուին: 5 յունուարի, թ. 5:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին հանգուցեալ Թադէոս Իսահակեանի ժառանգների նուիրած հինգ հազար (5000) ռուբլու №67660/2110 տոմսը՝ պատուիրելով մուտք գրել այդ գումարը մատեանում, յօգուտ Դպրոցական Ֆոնդի, և համապատասխան անդորրագիրն ուղարկել նուիրատուներին: 5 յունուարի, թ. 6:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Երևանի Ազովո-Դոնեան բանկում ընթացիկ հաշուով տուած տասն հազար (10,000) ռուբլու թ. 193 գրքոյկը, որպիսի գումարը փոխադրել է Մոսկուայի Հայոց Ցանձնաժողովը յօգուտ Տաճկահայ գաղթականների, և առաջադրուեց ստացման անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 5 յունուարի, թ. 7:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Տ. Գարեգին վարդապետի ներկայացրած ինժ. Մարկոսեանի գաղթականների օգտին նուիրած քսան և հինգ (25) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել նուիրատուին: 7 յունուարի, թ. 12:

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Եղբայրական օգնութեան Կարգադիր Ցանձնաժողովի թ. 4 յայտարարութեան վրայ. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի

Սինոդին գաղթականաց գումարից հինգ հազար (5000) ռուբ. փոխադրել Աղէքսանդրապոլ Տ. Արտակ վարդապետի անունով՝ տեղական Եղբայրական օգնութեան Յանձնաժողովին յանձնելու համար՝ յօգուտ գաղթականաց։ 8 յուն., թ. 35։

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Եղբայրական օգնութեան Յանձնաժողովի յունուարի 7-ի թ. 5 յայտարարութեան վրայ. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին Յանձնաժողովի անունով գաղթականների գումարից տալ հետզհետէ յիսուն չորս հազար չորս հարիւր (54,400) ռուբ. գաղթականների համար հագնելու շոր, գուլպա և այլ իրեր պատրաստելու։ 8 յուն., թ. 37։

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Եղբայրական օգնութեան Կարգադիր Յանձնաժողովի յունուարի 7-ի թ. 7 յայտարարութեան վրայ. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին տալ Տ. Մատթէոս եպիսկոպոսին գաղթականաց գումարից հինգ հազար (5000) ռուբլի՝ անձամբ տանելու Ջուղայ և յանձնելու Տ. Ներսէս եպիսկոպոսին, իսկ Տ. Բարգէն վարդապետին հինգ հարիւր (500) ռուբ. անձամբ Իգդիր տանելու և յանձնելու տեղական Մասնախմբին, եթէ տեղում կարիք տեսնի»։ 8 յունուարի, թ. 36։

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Եղբայրական օգնութեան Յանձնաժողովի յունուարի 7-ի թ. 6 յայտարարութեան վրայ. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին տալ Յանձնաժողովին գաղթականաց գումարից ընթացիկ ծախքերը հոգալու համար հինգ հազար (5000) ռուբլի»։ 8 յունուարի, թ. 38։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Մոսկուայի Արսէն քահանայ Սիմէոնեանի փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլին, որ նուիրել է օր. Եղիսաբէթ Միանասարեանը, պատուիրելով մուտք գրել մտից մատեանում յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 8 յուն., թ. 39։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Վլադիկաւկազից բժիշկ Նոյ Ղասումեանի Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած երկու հազար (2000) ռուբլին և պատուիրուեց դրամի ստացման անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 8 յուն., թ. 40։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Պօղոս Ալլահվերդեանի գաղթականների օգտին փոխադրած երկու հարիւր (200) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 8 յունուարի, թ. 41։

Կոնդակ Աղէքսանդրապօլի փոխանորդ Տ. Արտակ վարդապետի, Տ. Յակոբ քահանայ Խաչվանքեանի և պ. պ. Կարապետ Կամսարականի, Գէորգ Տէր Մարտիրոսեանի, բժիշկ Պատուական Յովհաննիսեանի, բժիշկ Վարոս Արշակունու, Երուանդ Տէր Մինասեանի, Համբարձում Տէր Ղազարեանի, Խաչատուր Իսահակեանի, Աստուածատուր Իսահակեանի, Թադէոս Խզմալեանի, Վարդգէս Արաբաջեանի, Մկրտիչ Ամիրջանեանի, Աշոտ Կարանեանի, Պարոյր Գեօնջեանի, Յովակիմ Աղաբալեանի, Աղէքսանդր Համբարձումեանի, Մարտին Յակոբեանի, Միսակ Տէր Յարութիւնեանի, Պետրոս Բիբուրեանի, Յովակիմ Միրզոյեանի, Նիկողայոս Կիրակոսեանի և Պետրոս Մոճոռեանի անունով, որոնք հաստատուեցին Տաճկահայ գաղթականներին ընդունող և պատսպարող Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անդամներ, յորդորելով հոգս տանել տարագիր գաղթականների պահպանութեան համար։ 8 յուն., թ. 42։

Դիւանի գրութիւն Մոսկուայի Տ. Արսէն քահանայ Սիմէոնեանի անունով, որով յանձնարարուեց յայտնել օրիորդ Եղիսաբէթ Միանսարեանին Նորին Սրբութեան օրհնութիւնն ու գոհունակութիւնը՝ Տաճկահայ գաղթականների օգտին յիշեալ քահանայի միջոցով ուղարկած հինգ հարիւր (500) ռուբ. համար։ 8 յունուարի, թ. 43։

Կոնդակ Եւրոպայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Գէորգ

արքեպիսկոպոս Իլթուճեանի անունով, որով նկարագրելով Տաճկահայ գաղթականների ներկայ ծանր և անտանելի կացութիւնը՝ պատուիրուեց թեմում կազմել տալ առանձին ցանձնաժողով և յորդորել, որ իրենց նուիրաբերութիւններով դիւրութիւն տան ս. Էջմիածնի Եղբայրական օգնութեան Կարգադիր ցանձնաժողովին՝ թեթևացնելու հայ գաղթականների ծանր կացութիւնը։ 8 յուն., թ. 51։

Կոնդակ նոյն բովանդակութեամբ Ամերիկայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Արսէն ծ. վարդապետ Վեհունու, Կենտրոնական Վարչութեան, եկեղեցիների Հոգաբարձութիւնների, Աստուածահաճոյ Ընկերութիւնների և Միութիւնների և Ամերիկահայոց բոլոր ազգային գործիչների անունով։ 8 յունուարի, թ. 53։

Կոնդակ նոյն բովանդակութեամբ Եգիպտոսի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Թորգոմ եպիսկոպոսի, Ազգային Վարչութիւնների և Հոգաբարձութիւնների, Աստուածահաճոյ Ընկերութիւնների և Միութիւնների անունով։ 8 յունուարի, թ. 54։

Կոնդակ նոյն բովանդակութեամբ բարձրապատիւ Տ. Եղնիկ վարդապետի, Պարսկա-Հնդկաստանի թեմի Հայոց Առաջնորդարանի, Վարչութիւնների և Հոգաբարձութիւնների անունով։ 8 յունուարի, թ. 52։

Կոնդակ նոյն բովանդակութեամբ Հնդկաստանի Կալկաթա և Զիչրա քաղաքաց արժանապատիւ քահանաների, եկեղեցիների կառավարիչների և տեղական հայ հասարակութեան անունով։ 8 յունուարի, թ. 55։

Կոնդակ նոյն բովանդակութեամբ Ռանգունի արժանապատիւ քահանաների, եկեղեցիների կառավարիչների և հայ հասարակութեան անունով։ 8 յուն., թ. 56։

Կոնդակ նոյն բովանդակութեամբ Սինգափուռի քահանայի, եկեղեցիների կառավարիչների և հայ հասարակութեան անունով։ 8 յուն., թ. 57։

Կոնդակ նոյն բովանդակութեամբ Բաթաւիայի և Սուր-

բայիայի քահանայի, Զաւայի ազգային հաստատութիւն-ների վարչութեանց և հայ հասարակութեան անունով։ 8 յուն., թ. 58։

Շրջաբերական կոնդակներ Վրաստանի, Շամախու, Աստրախանի, Բեսարաբիայի թեմերի առաջնորդների և Ղարաբաղի թեմի ժամ. Կառավարչի անունով, որոնցով յանձնարարուեց՝ ի նկատի ունենալով Ցաճկահայ և Պարսկահայ գաղթականների աննկարագրելի տնտեսական վիճակը, յորդորել թեմերում կազմուած ցանձնաժողովներին և Մասնախմբերին, որ նիւթական օգնութիւն հասցնեն իրենց եղբայրներին և քոյրերին։ 12 յուն., թ. թ. 65—69։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Գրիգորիոպոլի Ցարութիւն քահանայ Տէր Ենոքեանի գաղթականների օգտին փոխադրած մի հազար (1000) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 13 յուն., թ. 74։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Պեատիգորսկի Ցանձնաժողովի գաղթականների օգտին փոխադրած մի հազար (1000) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 13 յունուարի, թ. 75։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Պաւլովսկայա ստանիցայից (Կուբանեան շրջ.) փոխադրած յօգուտ գաղթականների մի հարիւր երեսուն և վեց ռուբ. 93 կ. (136 ռ. 93 կոպ.) (այդ գումարից 36 ռուբ. 43 կոպ. գոյացել է համերգից, իսկ մնացած 100 ռուբ. նուիրել է Եկատերինա Մեասնիկովը), պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 13 յուն., թ. 76։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Եանկևիչի գաղթականների օգտին փոխադրած երեք ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 14 յուն., թ. 79։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Լիդիա Խալաթեանի յօգուտ Տաճկահայ գաղթականների փոխադրած մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել Նուիրատուին: 16 յունուարի, թ. 84:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Շահալի գիւղի Սպառողական Ընկերութեան յօգուտ գաղթականների փոխադրած յիսուն (50) ռուբլին և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 յունուարի, թ. 91:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Գանձակի փոխանորդ Տ. Լևոն վարդապետի Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած չորս հարիւր ութսուն և մի ռուբլի 2 կոպ. (481 ռ. 2 կոպ.) և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 17 յունուարի, թ. 92:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի կոնսիստորիային յայտնել Սևաստօպոլի ծխական հայ համայնքին, որ առհասարակ քահանաներին վարձատրելու խնդրով պէտք է դիմեն թեմի առաջնորդին և ոչ թէ անմիջապէս Նորին Սրբութեան: 17 յուն., թ. 97:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ղզըլ-Արվադի Ցարութիւն քահանայ Մղեբրեանի Տ. Բագրատ եպիսկոպոսի անունով փոխադրած Տաճկահայ գաղթականների օգտին մի հարիւր երեսուն և հինգ ռուբ. 60 կոպ. (135 ռ. 60 կ.), պատուիրելով անդորրագիրն ուղարկել վերոյիշեալ Ցարութիւն քահանայ Մղեբրեանին: 19 յունուարի, թ. 106:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Կոկանդի Ցանձնաժողովի նախագահ ինժեներ Ցարութիւնեանի գաղթականների օգտին փոխադրած հինգ հարիւր եօթանասուն և հինգ ռուբլի (575 ռ.),

պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 19 յունուարի, թ. 107։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին ինժեներ–տեխնոլոգ Միքայէլ Գէորգեան Ալիբէգեանի յօգուտ գաղթականների փոխադրած երեք հազար (3000) ռուբլին և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել նուիրատու պ. Ալիբէգեանին։ 20 յուն., թ. 108։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ցարիցինի հայ կանանց Ընկերութեան 500 ռուբլու № 317048 փոխանակագիրը՝ պատուիրելով մուտք գրել յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յուն., թ. 109։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Անդրէաս Մութաֆեանի փոխադրած 548 ռուբլին, պատուիրելով մուտք գրել յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 22 յունուարի, թ. 110։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական օգնութեան գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին փոխադրել Իգդիր՝ կորպուսի կոմանդիրի անունով հինգ հարիւր ռուբլի՝ հայ գաղթականների կարիքների համար։ 23 յուն., թ. 134։

Շրջաբերական կոնդակներ Ռուսահայոց թեմական առաջնորդների անունով, որոնցով յայտնելով ներկայ Ռուս–Տաճկական պատերազմը, որի շնորհիւ և անհնար է Տաճկաստանի առաջնորդներից պսակուողների ամուրիութեան մասին ստոյգ տեղեկութիւններ ստանալ, ուստի թոյլ տրուեց, պսակի հրաման տալ գաղթական հայերին, երբ 6—7 գրագէտ անձնաւորութիւններ երդմամբ կհաստատեն պսակուողների ամուրիութիւնը։ 24 յունուարի, թ. թ. 149—154։

Կոնդակ Իգդիր աւանի Տ. Ստեփանոս քահանայ Տէր Թովմասեանի անունով, որով, Երևանի փոխ–թեմական

միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց, առանձնապէս գաղթականներին խնամելու գործում մեծ եռանդ և անձնուիրութիւն ցոյց տալու համար։ 28 յուն., թ. 163։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Սամարայից հայ գաղթականների օգտին փոխադրած մի հազար չորս հարիւր եօթանասուն չորս ռուբ., (1474 ռ.)։ 28 յուն., թ. 166։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Վլադիկաւկազի Առևտրական ակումբի նախագահի յօգուտ Տաճկահայ գաղթականների փոխադրած մի հարիւր (100) ռուբլին և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 յուն., թ. 167։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ղաթարի պղնձահանքի գործարանի ծառայողների փոխադրած յօգուտ Տաճկահայ գաղթականների իննսուն և եօթ ռուբլի 20 կոպ. (97 ռ. 20 կոպ.)։ 28 յունուարի, թ. 168։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տիրասպոլցի Գէորգ Գրիգորեան Մարդանովի փոխադրած յօգուտ Տաճկահայ գաղթականների տասն և հինգ (15) ռուբլին։ 28 յուն., թ. 167։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Մնացական Փրիդոնեանի փոխադրած յօգուտ Տաճկահայ գաղթականների մի հազար (1000) ռուբլին։ 28 յունուարի, թ. 170։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Զաքար Զարգարեանի Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած տասն (10) ռուբլին։ 28 յուն., թ. 171։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց նոյն Սինոդին Բագուի Փոխատու Ընկերութեան փոխադրած յօգուտ Տաճկահայ գաղթականների երեք հարիւր տասն և հինգ ռուբ. 94 կ. (315 ռ. 94 կ.)։ 28 յունուարի, թ. 172։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Աստրախանի Սարգիս քահանայ Ադամեանի ներկայացրած յօգուտ Տաճկահայ գաղթականների երկու հարիւր վաթսուն (260) ռուբլի։ 28 յուն., թ. 175։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Պետրոգրադից պ. Միքայէլ Ալլահվերդեանի, Տ. Բազրատ եպիսկոպոսի միջոցով, փոխադրած Տաճկահայ գաղթականների յիսուն (50) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել Նուիրատու Ալլահվերդեանին։ 3 փետրուարի, թ. 195։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին «Արարատ»-ի խմբագիր Տ. Բարգէն վարդապետի ներկայացրած՝ Տաթևի փոխանորդից ստացած, յօգուտ Տաճկահայ գաղթականների, ութսուն չորս ռուբ. (84 ռ.), և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 3 փետրուարի. թ. 196։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Տփխիսի Հայկական Բիւրոյի փոխ-նախագահ պ. Յովսէփ Խունունցին՝ Ամերիկայի Նիւ-Եորք քաղաքից Հայ կամաւորների օգտին հեռագրով փոխադրած, մի հազար երեք հարիւր յիսուն և հինգ ռուբ. (1355.)։ 7 փետրուարի, թ. 200։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Գրիգորիոպոլից Մարիամ Գէորգեան Կասապեանից փոխադրած յօգուտ Տաճկահայ գաղթականների ութ հարիւր (800) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 4 փետրուարի, թ. 202։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ա. Եաղջեանի փոխադրած, յօգուտ Տաճկահայ գաղթականների, չորս հարիւր (400) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 4 փետրուարի, թ. 203։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լուգանսկից փոխադրած Կ. Մ. Պոպովի ժառանգների Ընկերութիւնից, յօգուտ Տաճկահայ գաղթականների, մի

հազար (1000) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 4 փետրուարի, թ. 204։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին, Սեւաստապոլի Ստեփաննոս քահանայ Իսկեանդարեանի փոխադրած, յօգուտ Տաճկահայ գաղթականների, երեք հարիւր եօթանասուն հինգ (375) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 4 փետրուարի, թ. 205։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Երևանի ս. Զօրաւոր եկեղեցու երեսփոխան պ. Սարգիս Տէր-Գաբրիէլեանի անունով՝ նորա 14-ամեայ բարեխիղճ երեսփոխանական պաշտօնավարութեան առթիւ։ 7 փետրուարի, թ. 208։

Կոնդակ Նուխեցի պ. Աղէքսանդր Մարգարեանի անունով՝ Նուխի քաղաքի ս. Մինաս եկեղեցու յատակը իւր հաշուով նորոգելու առթիւ։ 4 փետրուարի, թ. 209։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին պ. Աղէքսանդր Օսմանցեանի Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած երեք հարիւր (300) ռ., պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 4 փետրուարի, թ. 210։

Կոնդակ Նոր-Բայազիտի գործակալ Տ. Ռուբէն աբեղայի և պ. պ. Յակոբ Ալիխանեանի, Ստեփան Բատիկեանի, Տիգրան Տէր-Մելքայէլեանի, Վահան Ափրիկեանի, Լեւոն Պետրոսեանի, Գէորգ Արծրունու, Մահտեսի Ափրիկեանի, Խաչատուր Բունիաթեանի, Վահան Արեշատեանի, Սարիբէկ Բաղդասարեանի, Խաչատուր Թորգոմեանի, Կարապետ Պետրոսեանի, Բէղլար Նալբանդեանի, Բագրատ Հասրաթեանի, Տիկիններ՝ Մագթաղ Ափրիկեանի, Զարուհի Նալբանդեանի, Աննա Արեշատեանի, Հռիփսիմէ Արեշատեանի, Հռիփսիմէ Աբրահամեանի, Սիրանոյշ Սինանեանի, օր. օր. Նուարդ Խոջանեաթեանի, և Արշալոյս Սանամեանի անունով, որով հաստատուեցին Տաճկահայ գաղթականներին օգնութիւն հասցնող Յանձնաժողովի անդամներ։ 5 փետրուարի, թ. 214։

Նորին Սրբութեան մակագրութիւն Ատրպատականի

Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի անցած յունուարի 27-ի յայտարարութեան վրայ. «Ի նկատի առնելով ներկայ հանգամանքները՝ պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին սոյն տարուայ Յունուարի 1-ից տալ Մայր Աթոռի Գանձարանից Ատրպատականի Թեմի Առաջնորդ Ներսէս եպիսկոպոսին ամսական հարիւր (100) ռուբլի ռոճիկ ցառանձին տնօրէնութիւն Մեր»: 5 փետրուարի, Թ. 217:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Երեւանի Վօլժսկօ-Կամսկի Առեւտրական բանկի 69,781 ռուբ. 80 կոպ. Թ. 125 անդորրագիրը եւ պատուիրուեց մուծել այդ գումարը՝ յօգուտ Տաճկահայ գաղթականների, առանձին-առանձին մտից մատեան եւ դրամներն ուղարկողներին անդորրագիր ուղարկել՝ այդ գումարը կազմում է՝

ա) Ճաւա կղզու հայերի եւ Լոնդոնի Հայոց Միութիւնից ուղարկած . . 48,510 ռ.
բ) Գահիրէից՝ Վսեմափայլ Պօղոս փաշայ Նուպարից . . . . 10,000 ռ.
գ) Մոսկուայից՝ երդուեալ հաւատարմատար Ստեփան Մամիկոնեանից . 10,000 ռ.
դ) Աքքերմանի Կանանց Ընկերութիւնից 771 ռ. 80 կ.
ե) Եալթայի Հայոց Յանձնաժողովից 500 ռ.

69,781 ռ. 80 կ.

8 փետրվ., Թ. 218:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց նոյն Սինոդին ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան գլխաւոր կարգադիր Յանձնաժողովի Կուբանեան շրջանի Ռոմանովսկի Խուտորից ստացած, յօգուտ հայ գաղթականների, երկու հարիւր (200) ռուբլին եւ պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն: 8 փետրուարի, Թ. 219:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց նոյն Սինոդին Հադրութի Փոխադարձ Վարկի Ընկերութեան Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած մի հարիւր յիսուն (150) ռուբլին, եւ առաջադրուեց մտից մատեանում

մուտք գրել և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 փետրուարի՝ թ. 221։

Նորին ս. Օծութիւնը մակագրութեամբ պատուիրեց ս. Էջմիածնի Մինօղին կարգադրել առաջիկայ մարտի 19-ին գանձանակ շրջեցնել տալ Երևանի և Տփխիսի թեմերի հայոց եկեղեցիներում, յօգուտ խուլ և համրերի, և ժողոված դրամն անմիջապէս ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 փետրուարի, թ, 222.

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Մինօղին տալ, գաղթականների գումարից, ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին՝ գաղթականների կարիքները հոգալու համար, ութ հազար (800) ռուբլի։ 9 փետրուարի, թ. 224։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին ուղարկել, գաղթականների օգտին ստացուած գումարից, Նոր-Բայազիտի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովին մի հազար (1000) ռուբլի։ 9 փետրուարի, թ. 225։

Դիւանի գրութեամբ ուղարկուեց Տփխիսի Հայկական Բիւրոյի փոխ-նախագահ Յովսէփ Խունունցին, Ամերիկայի Նիւ-Եորք քաղաքից փոխադրած, հայ կամաւորների օգտին, երկու հարիւր տասն (210) ռուբլին։ 9 փետրուարի, թ. 229։

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Վրթանէս վարդապետի անունով, որով յանձնուեց Նորան Մայր Տաճարի ժամերգնողի պաշտօնը։ 10 փետրուարի, թ. 233։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Մինօղին փոխադրել, Տաճկահայ գաղթականների օգտին ստացուած գումարից, Երևանի Եղբայրական օգնութեան Յանձնաժողովին քսան հազար (20,000) ռուբլի՝ գաղթականների սննդի և այլ պէտքերի համար։ 11 փետրուարի, թ. 241։

Նորին Սրբութեան մակագրութիւն Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմի Առաջնորդի 1914 թ. հոկտեմբերի

30-ի թ. 396 յայտարարութեան վրայ. «Ինկատի ունենալով Բեսսարաբիայի թեմի Առաջնորդ գերաշնորհ Տ. Ներսէս աբքեպիսկոպոսի թ. 396 և դեկտեմբ. 17-ի թ. 481 յայտարարութիւնները, թոյլ ենք տալիս Նիկողայոս Մարուտչեանին փոխադրել իւր հանդուցեալ որդու մարմինը, ժամանակաւոր դամբարանից, Քիշնևի իրենց տոհմական դամբարանը, պատուիրելով Բեսսարաբիայի Հայոց Կոնսիստորիային կատարել մեր այս որոշումը, եթէ քաղաքական իշխանութեան կողմից մի որևէ արգելք չկայ»: 11 փետր. թ. 243:

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովին փոխադրել, գաղթականների օգտին ստացուած գումարից, Իզմիրի Ցանձնաժողովին մի հազար ռուբլի՝ գաղթականների հիւանդանոցի համար: 11 փետրուարի, թ. 250:

Կոնդակ Ռումինիայի Հայոց թաղական խորհրդների, հոգաբարձութիւնների և ազգային հաստատութիւնների անունով, որով նկարագրելով Կովկաս գաղթած Տաճկահայերի թշուառ և աննախանձելի դրութիւնը՝ յորդորուեց շուտով դրամական օգնութիւն հասցնել, որպէսզի հնարաւոր լինի հոգալ գաղթականների կենսական ամենաանհրաժեշտ պէտքերը: 12 փետրուարի, թ. 253:

Կոնդակ նոյն բովանդակութեամբ Բուլղարիայի Հայոց Առաջնորդի և այլ հոգևոր ազգային հաստատութիւնների անունով: 12 փետրուարի թ. 254:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Գրիգորիոպոլի Ցարութիւն քահանայ Տէր-Ենոքեանի փոխադրած, յօգուտ Տաճկահայ գաղթականների՝ մի հարիւր յիսուն ռուբլին (150 ռ.): 16 փետրուարի, թ. 255:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Պետրոգրադի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին քսան և հինգ հազար ռուբլի (25,000 ռ.) փոխադրելու մասին: 17 փետրուարի, թ. 259:

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Գրիգոր Զալխուշեանի և Նոր-Նախիջևանի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ գաղթական հայերի օգտին քսան հազար (20,000) ռուբլի ուղարկելու առթիւ։ 17 փետր., թ. 260։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան իշխան Սիմէոն Ս. Աբամելիք-Լազարեանի անունով՝ գաղթական հայերի օգտին քսան և հինգ հազար (25,000) ռուբլի փոխադրելու առթիւ։ 17 փետրուարի, թ. 261։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Պետրոգրադի Հայոց Եկեղեցական Խորհրդի անունով՝ Ցանկահայ գաղթականների օգտին փոխադրած քսան և հինգ հազար (25,000) ռուբլի ուղարկելու առթիւ։ 17 փետր., թ. 262։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան ինժեներ Միքայէլ Գրիգորեան Ալիբէկեանի անունով՝ գաղթականների օգտին իւր նուիրած երեք հազար (3000) ռուբ. առթիւ։ 17 փետրուարի, թ. 263։

Նոյնպիսի Կոնդակ Պեատիգորսկի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների օգտին մի հազար (1000) ռուբ. ուղարկելու առթիւ։ 17 փետր., թ. 264։

Նոյնպիսի Կոնդակ Շամախու Հայոց Կուլտուրական Միութեան անունով՝ գաղթականների օգտին երկու հարիւր (200) ռուբլի ուղարկելու մասին։ 17 փետր., թ. 265։

Նոյնպիսի Կոնդակ Վլադիկաւկազի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների օգտին փոխադրած երկու հազար (2000) ռուբլու առթիւ։ 17 փետր., թ. 266։

Նոյնպիսի Կոնդակ Սիմֆերոպոլի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների օգտին փոխադրած եօթ հազար (7000) ռուբ. առթիւ։ 17 փետր., թ. 267,

Նոյնպիսի Կոնդակ Եկատերինոդարի եղբ. Բաղարսուկեանների և հանգուցեալ Մկրտիչ Բաղարսուկեանի ժառանգների անունով՝ գաղթականների օգտին տասն հազար (10,000) ռուբլի փոխադրելու առթիւ։ 17 փետր., թ. 268։

Նոյնպիսի Կոնդակ Արմաւրի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների օգտին հինգ հազար (5000) ռուբ. փոխադրելու առթիւ։ 17 փետր., թ. 269։

Նոյնպիսի Կոնդակ Աստրախանի Հայոց կանանց Բարեգործական Ընկերութեան և Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների օգտին երկու հազար հինգ հարիւր (2500) ռուբ. փոխադրելու առթիւ։ 17 փետր., թ. 270։

Նոյնպիսի Կոնդակ Ղզլարի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների օգտին փոխադրած մի հազար երկու հարիւր (1200) ռուբլու առթիւ։ 17 փետր., թ. 271։

Նոյնպիսի Կոնդակ Տագանրոգի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների օգտին փոխադրած երեք հազար (3000) ռուբ. առթիւ։ 17 փետրուարի, թ. 272։

Նոյնպիսի Կոնդակ Օդեսսայի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների օգտին փոխադրած մի հազար (1000) ռուբ. առթիւ։ 17 փետր., թ. 273։

Նոյնպիսի Կոնդակ Կոկանդի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների օգտին փոխադրած երկու հազար (2000) ռուբ. առթիւ։ 17 փետրուարի, թ. 274։

Նոյնպիսի Կոնդակ Գրոզնայի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին ուղարկած երկու հազար (2000) ռուբլու առթիւ։ 17 փետրուարի, թ. 275։

Նոյնպիսի Կոնդակ Ասխաբադի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած մի հազար հինգ հարիւր (1500) ռուբլու առթիւ։ 17 փետր., թ. 276։

Նոյնպիսի Կոնդակ Սամարա քաղաքի հայ հասարակութեան անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին մի հազար չորս հարիւր եօթանասուն և չորս (1474) ռուբլի փոխադրելու առթիւ։ 17 փետր., թ. 277։

Նոյնպիսի Կոնդակ պ. Մնացականի Գէորգեան Փրիդոնեանի անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին ուղարկած մի հազար (1000) ռուբլու առթիւ։ 17 փետրուարի, թ. 278։

Նոյնպիսի Կոնդակ Ցարիցինի Հայոց Կոմիտէի Նախագահի անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլու առթիւ։ 17 փետր., թ. 279։

Նոյնպիսի Կոնդակ Գրիգորիոպոլի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին ուղարկած մի հազար (1000) ռուբլու առթիւ։ 17 փետր., թ. 280։

Նոյնպիսի Կոնդակ Քիշնևի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած երեք հազար (3000) ռուբլու առթիւ։ 17 փետր., թ. 281։

Նոյնպիսի Կոնդակ Տաշքենդի Հայոց Ցանձնաժողովի անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած մի հազար (1000) ռուբլու առթիւ։ 17 փետր., թ. 282։

Նոյնպիսի Կոնդակ օր. Եղիսաբէթ Միանսարեանի անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլու առթիւ։ 17 փետր., թ. 283։

Նոյնպիսի Կոնդակ Ղ.ազարեան եղբայրների անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլու առթիւ։ 17 փետր., թ. 284։

Նոյնպիսի Կոնդակ Արմաւրի Հայոց Բարեգործական Ընկերութեան անունով՝ Տաճկահայ գաղթականների օգտին փոխադրած երկու հազար (2000) ռուբլու առթիւ։ 17 փետրուարի, թ. 285։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Լոնդոնից փոխադրած, յօգուտ Տաճկահայ գաղթականների, տասն հազար ութսուն (10,080) ռուբլին՝ պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 փետր., թ. 292։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Գանձակի Հայոց Ցանձնաժողովի փոխադրած, յօգուտ Տաճկահայ գաղթականների, չորս հարիւր (400) ռուբլին և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 18 փետր., թ. 293։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովին փոխադրել, գաղթականների օգտին ստացուած գումարներից, Աղէքսանդրապոլի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի անունով՝ գաղթականների կա-

րիքները հոգալու համար—հինգ հազար (5000) ռուբլի։ 18 փետրուարի, թ. 294։

Նորին Սրբութեան մակագրութիւն Մայր Աթոռի Գ. Հոգևոր Ձեմարանի Վարչութեան փետրուարի 16-ի թ. 71 յայտարարութեան վրայ. «Ի նկատի ունենալով այժմեան հանգամանքները, պատուիրում ենք Մայր Աթոռի Ձեմարանի Վարչութեան դասատուութիւնը դադարեցնել զատկական արձակուրդին, իսկ քննութիւններն ու դպրոցական այլ պարապմունքները մինչև ապրիլի 30-ը»։ 18 փետրուարի, թ. 295։

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովի փետրուարի 14-ի, թ. 34 յայտարարութեան վրայ. «Հաստատելով գաղթականաց ներկայ և ապագայ վիճակի բարելաւման մասին խորհրդակցելու համար համագումար հրաւիրելու անհրաժեշտութիւնը, պատուիրում ենք Մեր հովանաւորութեան ներքոյ գործող Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովին նախ՝ բացի յայտարարութեանս մէջ յիշատակուած 19 հաստատութիւնների և Ցանձնաժողովների ներկայացուցիչներից, մարտի 1-ին ս. Էջմիածնում կայանալիք համագումարին հրաւիրել նաև Թիֆլիզի հայ հոգևորականութեան և հոգաբարձութեան Ցանձնաժողովից մի ներկայացուցիչ և հայ գիւղատնտեսական ընկերութիւնից էլ մի ներկայացուցիչ. երկրորդ՝ ներկայացուցիչներին ուղղած հրաւէրի մէջ յիշել համագումարի զբաղման նիւթերը, որոնք արձանագրուած են սոյն յայտարարութեան մէջ»։ 18 փետր., թ. 296։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Ցանձնաժողովին փոխադրել, Տաճկահայ գաղթականների օգտին ստացուած դումարից, Ախալքալակի Ցանձնաժողովին հինգ հազար (5000) ռուբլի։ 18 փետր., թ. 298։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ս. Խաչ քաղաքի Նիկողայոս քահանայ

Ծուղուրեանի փոխադրած, յօգուտ Տաճկահայ գաղթականների, մի հարիւր (100) ռուբլին և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 19 փետր., թ. 300։

Նորին Սրբութեամբ մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Խերսոնի Քաղաքային Վարչութեան փոխադրած, յօգուտ Տաճկահայ գաղթականների, հինգ հարիւր (500) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 19 փետր., թ. 301։

Նորին Սրբութեան մակագրութիւն Օշականի ս. Մեսրոպեան դպրոցի շինութեան Յանձնաժողովի նախագահ Տ. Սահակ վարդապետ Ամատունու յայտարարութեան վրայ. «Ի նկատի ունենալով, որ պատմական Օշական գիւղում կառուցւում է ս. Մեսրոպի յիշատակին նոր և յարմարաւոր դպրոցական շէնք, պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինօդին տալ նոյն դպրոցի Շինարարական Յանձնաժողովին, դպրոցական ֆօնդի տոկոսներից, հինգ հարիւր (500) ռուբլի»։ 20 փետրուարի, թ. 313։

Նորին Սրբութեան մակագրութիւն ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Կարգադիր Յանձնաժողովի փետրուարի 21-ի յայտարարութեան վրայ. «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինօդին վճարել, գաղթականաց գումարից, Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին տասն և հինգ հազար (15,000) ռուբլի, որից հինգ հազար (5000) ռուբ. փոխադրելու Աղեքսանդրապոլ, երեք հազար (3000) ռուբ. Ախալքալակ, իսկ մնացեալը՝ Կարգադիր Յանձնաժողովի ընթացիկ ծախքերի համար»։ 20 փետր., թ. 319։

Նորին Սրբութեան մակագրութիւն Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսի հեռագրի վրայ, «Պատուիրում ենք ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին սոյն հեռագրական խնդրի հիման վրայ, փոխադրել Հին-Նախիջևան, Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի նախագահի անունով, հինգ հազար (5000) ռուբլի, գաղթականաց համար։ 20 փետրուարի, թ. 320։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց ս. Էջմիածնի Սինոդին անյապաղ վճարել, գաղթականաց գումարից, քսան հազար (20,000) ռուբլի ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին»։ 25 փետրուարի, թ. 322։

Կոնդակ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոսի անունով, որով կարգուեց Տաճկահայ գաղթականների օգնութեան գործը կանոնաւորելու մարտի 1-ին ս. Էջմիածնում կայանալիք Յանձնաժողովների, Ընկերութիւնների և հաստատութիւնների ներկայացուցիչների ժողովի նախագահ, պատուիրելով խոհականութեամբ ղեկավարել ժողովը և փակուելուց յետոյ բոլոր արձանագրութիւնները ներկայացնել Նորին Սրբութեան ի տնօրէնութիւն։ 24 փետրուարի, թ. 324։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Ֆերգանեան շրջանի Նամանգանի Ռուս-Ասիական բանկի փոխադրած, յօգուտ Տաճկահայ գաղթականների՝ երեսուն եօթ ռուբ. 50 կոպ. (37 ռ. 50 կ.) և պատուիրուեց անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 փետրուարի, թ. 325։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինոդին Շուշու Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի փոխ-Նախագահ՝ Թեմական դպրոցի Տեսուչ պ. Ղազար Տէր-Ղազարեանի փոխադրած, յօգուտ Տաճկահայ գաղթականների, հինգ հարիւր (500) ռուբլին, պատուիրելով անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 փետրուարի, թ. 326։

Նորին Սրբութեան մակագրութիւն Ատրպատականի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Ներսէս Եպիսկոպոսի փետրուարի 21-ի յայտարարութեան վերայ. «Ի լրումն Մեր ամսոյս 5-ի թ. 217 մակագրութեան պատուիրում ենք ս. Էջմիածնի Սինոդին աւելացնել Ատրպատականի Հայոց Թեմի առաջնորդ Տ. Ներսէս Եպիսկոպոսի ամսական 100 ռուբլի ռոճկի վրայ և 25 ռուբլի, որ կ՚լինի ամսական 125 ռուբլի, Մայր Աթոռի գանձարանի սուղ միջոցներից։ 26 փետրուարի, թ. 334։

Դիւանի Դրութիւն Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդի անունով, որով վերադարձնելով Յովհաննէս աւագ քահանայ Մարտիրոսեանի և Գիւտ աւագ քահանայ Աղանեանի կազմած «Կրօնի դասագիրք ա. տարի» և «Հայոց եկեղեցու Աստուածապաշտութեան համառօտ դասագիրք» յայտնուեց, որ Նորին Ս. Օծութեան բարձր հրամանով Թոյլատրուում է տպագրել և տարածել այդ դասագրքերը։ 26 փետրուարի, թ. 336։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Տ. Եփրեմ Եպիսկոպոսի միջոցով Տիկին Զաբէլ Զաւրեանից ստացուած, յօգուտ Տաճկահայ գաղթականների, ութսուն ռուբլին և պատուիրուեց մուծել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 փետրուարի, թ. 340։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին, Մայր Աթոռի գանձապահին ներկայացրած, երկու հազար (2000) ռուբլին, յօգուտ գաղթականների, որ ուղարկուած է Սպահանից, և պատուիրուեց մուտք գրել մտից մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 փետրուարի, թ. 347։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց նոյն Սինօդին նոյն գանձապահի ներկայացրած քսան հազար ռուբլին(20,000), որ փոխադրել է Պօղոս փաշայ Նուպարը Եգիպտոսի Գլխաւոր Միութիւնից՝ յօգուտ Տաճկահայ փախստականների, և առաջադրուեց մուտք գրել մտից մատեանում և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 փետրուարի, թ. 348։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Կոնդակ Ղարաբաղի Թեմի Ջրաբերդի ա. մասի գործակալ Դանիէլ քահանայ Եղդարեանցի անունով, որով, նոյն Թեմի ժամանակաւոր կառավարչի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 7 փետրուարի, թ. 206։

Կոնդակ Ղարաբաղի Թեմի Վարանդայի բ. մասի գոր-